Արձանագրություն N 3
« ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/108» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստ

ք. Երևան

27.08.2019թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մարտիրոսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Գուլգուլյան, Ս. Գևորգյան, Ա. Մարգարյան, Ե. Մատասյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ի.Եղիազարյան

1. Անհամապատասխանությունը շտկելու մասին

(Ա. Բալբաբյան)

1.1 «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամանակահատվածում շտկվել է անահամապատասխանությունը և գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը գնահատվել է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ա. Բալբաբյան)

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

2.1 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել է հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
Էյ Վի Էն Գրուպ ՍՊԸ	Բավարար
Հազարաշեն ՍՊԸ	Բավարար
Սարգիս եւ Մարիաննա ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցների մասին

(Ա. Բալբաբյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/108» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցներ ճանաչել.

-1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով «Էյ Վի Էն Գրուպ» ՍՊԸ-ին, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից

-5-րդ չափաբաժնի մասով «Հազարաշեն» ՍՊԸ-ին, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

4. Պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցից որակավորման փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Ա. Բալբաբյան)

4.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել պետական եկամուտների կոմիտե:

4.2 Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցներին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնեն որակավորման փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

5. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Բալբաբյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 4-րդ կետում նշված փաստաթղթերի գնահատման հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00 Երևանի քաղաքապետարան, Արգիշտի 1.3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

Հանձնաժողովի նախագահ՝	----------	Ա. Մարտիրոսյան
Անդամներ՝	----------	Վ. Գուլգուլյան
	----------	Ս. Գևորգյան
	----------	Ա. Մարգարյան
	----------	Ե. Մատասյան
Համակարգող՝	----------	Ի.Եղիազարյան